



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Հայրը:

Ուրբաթ, 17 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին՝ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 18 Օգոստոս.- Եփեսոսի Սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Օրուան Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 19 Օգոստոս.- Զ. Կիրակի զկնի վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 24 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին՝ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 25 Օգոստոս.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Ս. Հօր գըլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ և «Հրաշափառ»-ով մօտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»-ի և Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 26 Օգոստոս.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գըլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ և «Հրաշափառ»-ով մօտք

Շաբաթ, 28 Յուլիս.- Սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 29 Յուլիս.- Գ. Կիրակի զկնի վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Շաբաթ, 4 Օգոստոս.- Սրբոցն՝ Պետրոսի Հայրապետին, Վլասայ Եպիսկոպոսին և Աբիսողոմայ Սարկաւագին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան:

Կիրակի, 5 Օգոստոս.- Դ. Կիրակի զկնի վարդավառի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց և քարոզեց Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 11 Օգոստոս.- Սրբոց Հայրապետացն՝ Աթանասի և Կիւրղի և Գրիգորի Աստուածաբանին: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կիրակի, 12 Օգոստոս.- Ե. Կիրակի զկնի վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: «Խաղողօրհնէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան

գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցց և քարոզեց Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան:

«Անդաստան»-ի արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»-ին և նախատօնակին նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 27 Օգոստոս.- Յիշատակ մեռելոց: Կէս գիշերէն ետք 2:30-ին կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի Աստուածամօր Տաճար, ուր գիշերային Ս. Պատարագը Աստուածամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցց Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Շաբաթ, 1 Սեպտեմբեր.- է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի, 2 Սեպտեմբեր.- Ը. օր Վերափոխման: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգշեան:

Երկուշաբթի, 3 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 5 Սեպտեմբեր.- Սըրբոցն Յովակիմայ և Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի և կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

Շաբաթ, 8 Սեպտեմբեր.- Ս. Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Շաբաթ, 8 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 9 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտուոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց և քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն երկու օրեր առաջ Տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիններու և օրհորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 15 Սեպտեմբեր.- Սրբոց Առաքելոցն՝ Յակոբայ և Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 16 Սեպտեմբեր.- Դ. Կիրակի զկնի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Հինգշաբթի, 20 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 21 Սեպտեմբեր.- Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ և «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցց և քարոզեց Գերաշնորհ Հանդիսապետ Սրբազանը:

Ս. Պատարագէն յետոյ կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան առիթով:

Շաբաթ, 22 Սեպտեմբեր.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հարիւր ութ և տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.

Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիրակի, 23 Սեպտեմբեր.– Ե. Կիրակի զկնի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:


Շաբաթ, 29 Սեպտեմբեր.– Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, որ ապա Ս. Խաչափայտի մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէի» և «Հսկման» արարողութեանց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որմէ յետոյ Վանքի Մեծ Բակին մէջ կատարուեցաւ խաչի մոմավառութիւն:

Կիրակի, 30 Սեպտեմբեր.– Տօն Վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան կատարուեցաւ ժամերգութիւն և «Անդաստան»: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց և քարոզեց Վիրահայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Վազգէն Եպս. Միրզախանեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Երկուշաբթի, 2 Յուլիս.- Առաւօտեան ժամը 11-ին, Պատրիարքարան այցելեց և Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Իսրայէլի մէջ Հայաստանի նորանշանակ Արտակարգ և Լիազօր դեսպան Պրն. Արմէն Սմբատեան:

Ուրբաթ, 13 Յուլիս.- Երեկոյեան ժամը 4-ին, Լուտերական եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Տ. Մունրիպ Եոնան այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 24 Յուլիս.- Առաւօտեան ժամը 10-ին, Հայաստանէն Ս. Աթոռ ժամանած Օսմանագէտներ, Երեւանի Պետական Համալսարանի Դոցենտ՝ Տիկին Լուսինէ Սահակեան և Բանասիրական գիտութիւններու թեկնածու՝ Տիկին Անի Սարգսեան այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Օսմանագէտները Ս. Աթոռ ժամանած են ցեղասպանութեան արխիւին մէջ իրենց ուսումնասիրութիւնները շարունակելու:

Չորեքշաբթի, 1 Օգոստոս.- Վատիկանի «Փոքրամասնութիւններու Իրաւունքներու Պաշտպանութեան» վարչութեան պետ՝ Պրն. Սալվատոր Մարթինէզ այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյ Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 3 Օգոստոս.- Պաղեստինի մէջ Եւրոմիութեան ներկայացուցչութեան պաշտօնեաները այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Ներկայացուցչութեան ֆինանսական օժանդակութեամբ նորոգութեան ծրագիրներ իրականացնելու մասին հարցեր:

Երկուշաբթի, 27 Օգոստոս.- Երոսաղէ-

մի Ղպտի եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Տ. Անպա Անտոնիոս այցելեց Հայոց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ս. Աթոռոյ Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սրբատեղեաց մասին հարցեր:

Շաբաթ, 8 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, գանատահայ երաժիշտ՝ Տիար Լեւոն Իշխանեան այցելեց Պատրիարքարան, հանդիպում ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ և ստացաւ Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Երկուշաբթի, 10 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին Հունգարիայէն Սուրբ Երկիր ժամանած ուխտաւորներ, առաջնորդութեամբ լատին վարդապետ՝ Vencel Tóth-ի այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 12 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին, երոսաղէմի Waqf-ի ղեկավար Sheikh Azzam al-Khatib al-Tamimi այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյ Գահակալ Նորին Ամենապատուութեան հետ:

Հինգշաբթի, 13 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Պատրիարքարան այցելեց և Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ ԱՄՆ նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս Տիկ. Գարէն Սասահարան, ընկերակցութեամբ հիւպատոսարանի արարողակարգային գրասենեակի պատասխանատու Տիար Ճէյսըն Սմիթի:

Նոյն օրը երեկոյեան Իսրայէլի նախագահական պալատի աշխատակիցներ առաջնոր-

դուրսեմք Սաղիմահայ Յակոբ Ճոնազեանի, այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երկուշաբթի, 17 Սեպտեմբեր.– Առաւօտեան ժամը 10:30-ին Պատրիարքարան այցելեց և Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Երուսաղէմի քաղաքապետի թեկնածու Տիար Օֆեր Պէրքովիչ:

Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր.– Խաչվերացի տօնին առիթով հիւրուրէմք Ս.Աթոռ ժամանեց Վիրահայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Վազգէն Եպս. Միրզախանեան:

Յաջորդ օրը, երեկոյեան ժամը 4-ին Գերաշնորհ Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

